ՊԳ

106. Դմիտրիև Ի. Նրան ամենքը ճանաչում են /Պատմվածք/ /Գավառական բժշկի Օրատեստից/ /Թարգմ. Հայկ. քահ. Մառիկյան.— Թիֆլիս, Տպ. «Հերմես» ընկ., 1905.—24 էջ.

ՊԳ

107. Դմիտրիևա Վ. Ի. Մանչուկն ու կուտիկը /Զրույց /Փոխադր. ռուս. Պերճ Պոռչյանց.— Թիֆլիս, Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1899.—44 էջ.

ՊԳ

108*. Դոբրոլյուբով Ն. Ա. Առեքսանդր Գավառցի քահանան և իր քարոզները /Թարգմ. ռուս. Գևորգ Մկրտումյանց.— Ս.— Պետեր-բուրգ, 1902.—73 էջ.

Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա.—

Տես՝ Գ. Հովնան «Ռուս-հայ գրական կապե-րը» գրքում, էջ 492.

109. Դոստոևսկի Ֆ. Մ. Ազնիվ գող (Վիպակ), Անժանոթի գրվածքներից /Թարգմ. Ն. Զ.— Թիֆլիս, Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Մ. Վարդանյանցի, 1904.—32 էջ.

Կազմակից է Ն. Կարիչևի «Տնտեսագիտական դրույցներ» զըրբին.— Տես՝ ալիգ. 4.

ՊԳ

110. Դոստոևսկի Ֆ. Մ. Հիշատակարան մեռյալ տանից /Ռուս. Թարգմ.— Ս.— Պետերբուրգ, 1896.—183 էջ, իլ. 19 ներդ. թ.

Գրքում Թարգմանչի մասին չի նշված, Հավելված «Արաքս» գրական և գեղարվեստական հանդեսի, 1898 թ., Գիրք Ա, 8-րդ տարի:

ՊԳ

111. Դոստոևսկի Ֆ. Մ. Հիսուսի տոնածառը /Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս, Տպ. Ն. Աղանյանցի, 1910.—19 էջ.— (Նվեր մանուկներին).

ՊԳ

112. Դոռոշևիչ Վ. Զարամիտ Պարսկական հեքիաթ /Թարգմ. Մենիկ Թումանյան.— Մոսկվա, 1907.—10 էջ.

Կազմակից է Վլ. Կոխանովսկու «Վերադարձ» գրքին, 1907, էջ 13—23. Տես՝ ալիգ. 2.

ՊԳ

113. Նլաշիչ Նվ. Փռթկանը /Թարգմ. Նփրեմ Սարգսյան.— Թիֆլիս, Հրատ. «Հասկեր» ամսագրի, «Նվեր մանուկներին» ընկ.. տպ. Ն. Աղանյանի, 1914.—16 էջ.— (Նվեր մանուկներին).

ՊԳ

114*. Նդրայր և քույր Մանկական վեպ /Թարգմ. Զարմայր Մսերյան.— Մոսկվա, Տպ. Լազարյան ճեմարանի, 1881.

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 566.

115. Նվրեինով: Արևելյան ավանդություն /Թարգմ. ուս.— Մոսկվա, Տպ. Մկրտիչ Բարխուդարյանի, 1891.—24 էջ.

ՊԳ

116. Նրգեր: /Թարգմ. Դավիթ Նորեկ.— Բաքու, Տպ. Ն. Նրեվանցյանի, 1907.— 53 էջ.— (Գրադ-ն «Կյանք», № 11).

Բովանդ.—ից: Բանվորների երգը /Ն. Ն./; Վալախական լեզենդա /Մ. Գորկի/; «Հարստություն իմ, օ, ազատություն» /Լ. Շուստով/; Լուսադեմին /Ն. Մինսկ; «Ասիր»

յՄ. Միխայլով/; Մորիկ /Տան/; «Ազատություն, ազատություն, մեզ ճնշում են, հալածում» /Ա. Բուլկոնսկի/; Աշխատավորների երգը (Նեմիրովիչ-Պանչենկո); «Բանվոր-եղբայրներ— բախտի խորթ որդիք» /Նեմիրովիչ-Պանչենկո/; «Խաղաղ գիշերին» (Պ. Յակուբովիչ); Հայրենի սահմանը /Պ. Յակուբովիչ/; «Ով մեզ հետ է, թող հիմա գա» (Ի. Ռուկավիշնիկով):

Սույն ժողովածուում օտարազգի մի շարք գրողների ստեղծագործությունների հետ միասին տպագրված են նաև ռուս գրողների երկերից հատվածներ:

ՊԳ

117. Երգելակայա: Դյուդում /Ռուս. թարգմ.— Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1898.—81 էջ.— (Նվեր մանուկներին):

Սույն հրատարակությունը նախատեսված է մանուկների ընթերցանության համար: Թարգմանչի մասին չի նշված:

ՊԳ

118. Երեխ վեպիկ /Թարգմ. Լևոն Մելիք-Աղամյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1896.—54(1) էջ.

Բովանդ.: Մայրական սիրտ: Ֆրանսիական հին առասպել (Դավիթ Գեշի); Առանձին: Վեպիկ (Մաթիլդա Սերաո); Վրեժ: Վեպիկ (Ա. Գերեն):

ՊԳ

119. Երկու զրույց: Անչափ սեր (Խ. Տ-ի); Շղթա... /Թարգմ. Խ. Տեր-Մարգարյանց.— Թիֆլիս: Տպ. Կղբ. Թավադթիլաձեի, 1902.—32 էջ.

Արձակ պատմվածքներ: Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից:

ՊԳ

120*. Երկու կատվի պատմությունը /Ռուս. թարգմ.— Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1896.— (Մանկական գրադ-ն):

Սույն հրատարակությունը նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 607.

121. Երկու վաճառականներ /Ռուս. թարգմ. Լևոն Գևորգյանց.— Դավրեժ (Թավրիզ): Տպ. Թավրիզի Հայոց Արամյան դպրոցի, 1899.—25 էջ.— (Երեխաների ընթերցման համար: № 5):

ՊԳ

122*. Երկու վեպք հրեխանց համար /Թարգմ. Գարրիել Հե-
ջուբյանց.— Մոսկվա: Տպ. Լազարյան ճեմարանի, 1859.

Ա. Ղազիկյանի մատենագիտության մեջ հեղինակի մասին չի
հիշատակված: Հավանական է, որ Թարգմանությունը կատարվել է
ռուսերենից:

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 607.

123. Զախարին: Գազանի հետևից: Կատակ-կոմեդիա 2 արար.
/Թարգմ. Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ.
Ն. Աղանյանի, 1911.— 40 էջ.— (Թատրոնական գրադ-ն).

Ժողովրդական հանրամատչելի պիեսների հավաքածու ռուսե-
րենից Թարգմանված: Կազմակից է Գր. Ավետյանի «Թատրոնական
գրադարան» գրքին: Հտ. 2, ալիգ. 3.

ՊԳ

124. Զաստդիմսկի Պ. Վ. Անառակ որդին: /Վեպ/ /Թարգմ.
Ստ. Զոհրաբ.— Նոր-Նախիջևան: Հրատ. Ս. Ավագյանի, տպ. Սերով-
բե Ավագյանի, 1906.— 87 էջ.

ՊԳ

125. Զաստդիմսկի Պ. Վ. Գայլը: /Հեքիաթ/ /Թարգմ. ռուս.—
Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1901.— 29 էջ, նկ.— (Նվեր մա-
նուկներին).

Նախատեսված է մանուկների համար: Սույն հրատարակու-
թյունը տպակից է Լ. Շելգունովայի «Արջի պատմությունը» գրքին:
Տես՝ ալիգ. 2.

ՊԳ

126**. Զավակները: Դրամա 1 գործող. /Ռուս. Թարգմ.— Ա. տ.
և Բ.).— 22 էջ.

Նկարագրությունը կատարված է տեքստից: Գրքույկը չունի
անվանաթերթ: Հեղինակի մասին չի նշված: Թարգմանչի վերա-
բերյալ հիշատակություն չկա:

Կազմակից է Ա. Դյումայի «Տիկին Մոնսորո» գրքին.— Տես՝
ալիգ. 2.

ՊԳ

127. Զացեպինայա Ա. Դ. Փոքրիկ Պարույրի արկածները
/Թարգմ. ռուս.— Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1904, 71 էջ,
նկ.— (Նվեր մանուկներին).

ՊԳ

128. Զգուշացիւ ժլատութիւնից /Փոխադր. ռուս. Ա. Ի. Լեռնեց.— Թիֆլիս: Հրատ. Լ. Մ. Վարդանյանի, տպ. Մովսէս Վարդանյանցի, 1904.—15 էջ.

Հեղինակի մասին գրեւելու մի հիշատակված:
ՊԳ

129. Զլատովրատսկի: Մոռացված /Թարգմ. Ս. Այվազյան.— Մոսկվա: Հրատ. Մ. Զ. Ա.-Զ., տպ. Ք. Բարխուդարյանի, 1896.—13 էջ.

Սույն հրատարակութիւնը տպակից է Գ. Ուսպենսկու «Երեխաների կյանքից» գրքին, էջ 23—36:— Տես՝ ալիգ.2.

ՊԳ

130. Զրույցներ: Տետր Ա. /Փոխադր.— Թիֆլիս: Հրատ. «Ասք-Ալի»-ի, տպ. Մ. Ռոտինյանցի, 1892.—30 էջ.

Բովանդ.: Անասուններն էլ մեղք են Կուլը երաժիշտը; Երազ; Ճըշմարտախոս աշակերտը; Եղբայրասերը:

Սույն հրատարակութեան ուսումնասիրութիւնը ցույց տվեց, որ գրքուկը թարգմանել է Ասքանազ Տեր-Սիմոնյանը ռուսերեն հրատարակութիւնից՝ փոխադրաբար: Նախատեսված է մանուկների ընթերցանութեան համար:

ՊԳ

131*. Զուբով Պ. Ղարաբաղի աստղագետը: Վեպ 2 մասից.— 2-րդ հրատ. /Թարգմ. Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան).— Վիեննա, 1906.—

Մաս 1.—363 էջ.

Մաս 2.—542 էջ.

Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Հովհ. Պետրոսյանի «Հայ գրականութեան բիբլիոգրաֆիա»-ն, 1953, էջ 320.

132. Զուբով Պ. Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնադրումը 1752 թ.: Անդրկովկասյան պատմական վեպ /Թարգմ. Բաֆֆի.— Թիֆլիս: Կովկ. կառավարչ., տպ. գլխ. կառավարչ., 1882.—XIII, 244 էջ.

Գիրքը բաղկացած է 2 մասից:

Սույն հրատարակութեան մեջ զետեղված է առաջաբան՝ «Թարգմանից» խորագրով:

ՊԳ

133. Էլիզայի վիշտը: /Վեպիկ/ /Թարգմ. Բարսեղ Քամալյան.— Թիֆլիս: Տպ. Մ. Ռոտինյանցի, 1887.—28 էջ.

Անվանաթերթի վրա հեղինակը չի նշված:

ՊԳ

134. Ընտիր հատվածք քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց, հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պետս աշակերտաց կազարեանց ճեմարանի Արևելեան Լեզուաց /Աշխատասիրեց՝ Մկրտիչ էմին.— Մոսկվա: «Ի տպագրատուն նորին Ճեմարանի», 1849.—256+149 էջ.— (Շպկ-ի վրա՝ «Ընտիր հատուածք քաղեալք ի մատենագրաց հայոց»):

Բովանդ-ից: Սուլթան Մեհեմեմետ Բ ֆաթիհ /Գ. Այվազովսկի/; էջ և սոխակ /Կոհլով/; Երաժիշտք (Կոհլով); Երեկոյին խորհրդածութիւն զմեծութենէ Աստուծոյ՝ի դէպս մեծի Հիւսիսային արշալուսոյ /Լոմոնոսով/; Ի մահն Մեսչերսկիոյ /Դերժավին/; Յանկ; Բառգիրք (հայ-ռուս. բառարան):

ՊԳ

135. Ընտիր հատվածք, քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց: Հանդերձ բառգրքովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ, ի պետս աշակերտաց Լաղարեանց ճեմարանի Արևելեան Լեզուաց.— Մասն Ա.— Մոսկվա: Տպ. Լազարյան ճեմարանի, 1848.—256+149 էջ.

Գիրքը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը ընդգրկում է Ոգիմպիանոսի և Մխիթար Գոշի առակները և հատվածներ հայ պատմիչների աշխատություններից:

Երկրորդ մասը չափածո գործեր են՝ Լաֆոնտենից, Փեդրայից, Կոհլովից, առանձին հատվածներ՝ Դերժավինից, Ուլանդից, Շիլլերից... Գյոթեից, Հոմերոսից և այլն:

Երրորդ մասը ինքնուրույն էջակալությամբ հայ-ռուսերեն բառարան է: Կազմողի անունը գրքում չի նշված: Բանասիրությանը հայտնի է, որ սույն հրատարակությունը Մկրտիչ էմինի աշխատությունն է:

Այս գիրքը լույս է տեսել նաև հաջորդ՝ 1849 թ. միանգամայն նման և նույն բովանդակությամբ, այն տարբերությամբ, որ փոխվել է հրատարակության տարեթիվը և անվանաթերթից հանվել է «Մասն Ա» նշումը:

ՊԳ

136. Թամար: Պատկեր /Թարգմ. Մելքոն Պապյան-Դանադյոզ.— Թիֆլիս: Տպ. Մ. Ռոտինյանցի, 1889.— 20 էջ.— (Ժողովրդ. գրող-ն № 8).

Հեղինակի մասին գրքույկում չի նշված, ի՞նչ թարգմանություն է, հայտնի չէ: Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից:

ՊԳ

137. Թատրոնական գրադարան.— Հտ. Ա և Բ. /Թարգմ. և կազմ. Գրիգոր Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Ն. Աղանյանի, 1911.—

Հտ. Ա.—(1) 347 (6) էջ.

Բովանդ.: Միրտը հանելուկ է: Կոմեդիա 3 արար. Լեոն Իվանով /Թարգմ. Գր. Ավետյան (էջ 3—100); Վերոլկի գաղտնիքը: (Վոդրվիլ 1 արար.) Հեղ. Լիսենկո-կոնիչ /Թարգմ. Գր. Ավետյան (էջ 101—140); Ինչպես նրանք թողին ծխելը: (Կատակերգ. 2 արար.) Վ. Տրախտենբերգ, /Թարգմ. Գր. Ավետյան (էջ 141—187); Առաջարկություն: (Կատակերգ. 1 արար.) Զեխով, /Թարգմ. Գր. Ավետյան էջ 188—216); էս էլ քեզ 200.000: (Կոմեդիա 3 արար.) Մյասնիցկի, Փոխադր. Գր. Ավետյան (էջ 217—319); Կանացի ցանցառություն: (Կատակերգ. 1 արար.) Շչեգով, /Թարգմ. Գր. Ավետյան (էջ 320—347):

Հտ. Բ.—258(2) էջ.

Բովանդ.: Զվարճալիք: Դրամա 3 արար. (էջ 3—100) Շնիցկեր; Մի բառ մինիսրին: Կոմեդիա 1 արար. /Լանգեր/. (էջ 101—140); Գազանի հետևից: Կատակերգ. կոմեդիա 2 արար... (էջ 141—181); Փոթորիկ: Կատակերգ. 1 արար. /Նազարեվա/ էջ 182—199; Զարաճճի: Ֆարս 3 արար. էջ 200—229; Զարագուշակ նստարան: Վոդրվիլ 1 արար. /Խոլոստով/, (էջ 230—258):

Ժողովրդական հանրամատչելի սույն պիեսները ռուսերենից թարգմանել է արևելահայերեն, աշխարհաբար լեզվով՝ Գրիգոր Ավետյանը:

Գրքի շապիկի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի վրա տպագրված է լույս տեսած թատերական պիեսների գրացուցակը:

Տես նաև՝ Պիեսների ժողովածու...

ՊԳ

138. Թարգմանական մեղեդիներ: (Նաղսոնից, Լերմոնտովից, Հայնեից և ուրիշներից) / Թարգմ. Մ. Տարախչյան.— Ալեք-պոլ: Տպ. «Շիրակ», 1908.— 32 էջ.

Բովանդ.: Լերմոնտով: Նախակ: «Տխուր ու տրտում անցնում են օրեր», «Դուրս եմ գալիս դեպ՝ ճանապարհ ես մենակ», Մի հատված «Մահվան հրեշտակ»-ից: Նախաբան: Գորբունով-Պոսադով: «Երջանիկ է նա, ով անվերջ սիրով...».

Ռուս գրողների հայերեն թարգմանությունների հետ միասին սույն հրատարակության մեջ տեղ են գտել նաև օտարազգի հեղինակների ստեղծագործություններից առանձին հատվածներ (չափածո):

ՊԳ

139. Թարգմանութիւնք արձակ և ոտանավոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ, ի Ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկիոյ և Գնեդիչէ / Ռուս թարգմ. Հ. Համազասպանց.— Մոսկվա: Տպ. Լազարյան ճեմարանի, 1843.— 113, 3 չհ. էջ.— Տեքստը ռուսերեն և հայերեն:

Բովանդ.: Ժուկովսկի: Շինական պահապան: Ունայնություն: Կիրակի առավոտ: Սովորություն նորմանաց: Աստղ Առավոտու: Կալանավոր: Պուշկին: Ռուսալիկ: Ծով և ցամաք: Մի տար ինձ տեր: Եվ խոնջյալն ուղևոր: Ի հին ավուրս: Մարգարե: Երգ թաղման: Սոխակ: Ամպ: Կովկաս: Լերմոնտով: Հրեշտակ: Եղևնին: Բարատինսկի: Աստղ: Գնեդիչէ: Գիշեր Պետերբուրգայ:

Գիրքը ունի 2 տիտղթ. Ա տիտղթ. ռուսերեն, Բ տիտղթ. հայերեն: Թարգմանությունը գրաբար է:

Ռուս բանաստեղծների երկերի թարգմանությունների առաջին տպագրությունները պատկանում են Լազարյան ճեմարանի սաներին:

19-րդ դարի 20—30-ական թվականներին, նախ Հարություն Ալամդարյանը, ապա Մկրտիչ էմինը, Լազարյան ճեմարանի սաներին ծանոթացնում են ռուս դրողների ստեղծագործություններին:

Մկրտիչ էմինը հաև Պուշկինի առաջին հայ թարգմանիչն է: Դեռևս բանաստեղծի կենդանության օրոք, անցյալ դարի 30-ական թվականների առաջին կեսին, նա թարգմանել է «Բախչիսարայի շատրվանք» և «Կովկասի գերին», որոնք, սակայն, ժամանակին չեն տպագրվել: Այսպիսով, հայ ընթերցողն առաջին անգամ ծանոթացավ Պուշկինի, Լերմոնտովի, Ժուկովսկու և մյուս ռուս գրողների երկերին:

ՊԳ

140. Թշվառ մայրը: Պատմական դրույց /Ազատ թարգմ. Զ. Զալիյանց.— Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1889.—36 էջ.

Հեղինակի մասին գրքույկում չի նշված: Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից:

ՊԳ

141*. Թշվառների բարեկամ բժ. Հաազ /Ռուս. փոխադր. Վ. Արծրունի.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատ. ընկ., 1900.—91 էջ.

Նկարագրությունը կատարված է բանասիրական աղբյուրների, հիման վրա: Հեղինակի մասին հիշատակություն չկա:

Տես՝ «Մուրճ», 1906, № 3, էջ 110.

142. Ժողովածու.— Մոսկվա: Տպ. Մկրտիչ Բարխուդարյանի, 1892.—244(1) էջ.

Սույն ժողովածուում մի շարք ռուս գրողների՝ Զլատովրատսկու, Սալտիկով-Շչեդրինի ստեղծագործությունների առանձին հատվածների հետ միասին տեղ են գտել նաև օտարազգի ժողովուրդների հեղինակների երկերը:

Անվանաթերթի վրա նշված է՝ «Հօգուտ ռուս սովյալների»:

ՊԳ

143. Ժուկովսկի Վ. Ա. Երեք գոտի: Ռուսական հեքիաթ /Ռուս. թարգմ. Մ. Վ. Մաքսուդյանց.— Դավրեժ (Թավրիզ): Տպ. Թեմական, 1905.—316 էջ.

ՊԳ

144. Ժուկովսկի Վ. Ա. Քնած արքայադուստրը /Հեքիաթ/ /Փոխադր. Աթ. հենդյան.— Թիֆլիս: Հրատ. Կովկաս. հայոց հրատարակչ. ընկ., տպ. ն. Աղանյանցի, 1912.—15 էջ, նկ.

Սույն հրատարակությունը կազմակից է ն. Տեղեղովի «Սպիտակ տառեղներին» գրքին.— Տես՝ ալիգ. 10. Նախատեսված է մանուկների համար: Նկարադրությունը կատարված է տեքստի 1-ին էջից: Ա. տիտղթ. և շապիկի: Փոխադրությունը կատարված է բնագրից: ՊԳ

145. Ինֆանցիե: Թշնամիներ: Պատմվածք ռուս-ճապոնական պատերազմից /Թարգմ. Սոֆ. Գալստյան.— Թիֆլիս: Տպ. ն. Աղանյանցի, 1915.—28 էջ.— (Նվեր մանուկներին).

ՊԳ

146. Իվանով Ի. Հանդիպումն /Թարգմ. Ար. Գր.— Թիֆլիս: Տպ. «Գուտտենբերգ», 1908.—16 էջ.

ՊԳ

- 147. Իվանով Լ. Ըստ հայտարարության: Վոդլվիլ 1 գործող- /Թարգմ. Վ. Մանվելյան.— Թիֆլիս: Տպ. Մ. Ռոտինյանցի, 1908.—16 էջ.

Կազմակից է Կ. Ավետիսյանի «Զուր հյուրասիրություն» կատակերգությանը.— Տես՝ ալիգ. 4.

ՊԳ

148. Իվանով Լ. Սիրտը հանելուկ է: Կոմեդիա 3 ակտ. /Ռուս. թարգմ. Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. ն. Աղանյանի, 1911.—97 էջ.

Սույն հրատարակությունը տպակից է՝ «Թատրոնական գրադարան» գրքին, հտ. Ա, էջ 3.

ՊԳ

148ա. Իվանովիչ: Վարժուհու երազը: /Պատմվածք/ /Թարգմ. Լ. Թադևոսյան.— Թիֆլիս: Հրատ. Մ. Ստեփանյանի, տպ. վրաց հրատ. ընկ., 1898.—32 էջ.

ՊԳ

Սույն հրատարակությունը կազմակից է ն. Տեղեղովի «Սպի- Պերճ Պոռչյանց.— Թիֆլիս: Տպ. ն. Աղանյանի, 1910.—87 էջ.— (Հավելված «Հասկեր» ամսագրի).

ՊԳ

149ա*. Իվանովիչ Ի. Պառավ Տոնկա /Ռուս թարգմ. Ն. Բաբա-
բեխովյան.— Մոսկվա: Տպ. Մ. Բարխուդարյանցի, 1893.—18 էջ.

Տես՝ «Սովետահայ թարգմանական գեղարվ.
գրակ.—ն»։ Մատենագիտ. էջ 738.

149բ*. Լազարեիչ Լ. Կ. Հայրս: /Պատմվածք/ /Թարգմ. Ս. Ղ.—
Շուշի: Տպ. Մահտեսի Կակոսյանի, 1894.—34 էջ.

Տես՝ «Սովետահայ թարգմանական գեղարվ.
գրակ.—ն»։ Մատենագիտ. էջ 739.

150. Լակիդե Ա. Երրորդ ոսկի: Առակ Ա. Լակիդեի: /Պարզեա-
տրված Ս. Պետերբուրգի ֆրեոբելյան ընկերությունից/ /Թարգմ.
Գյուտ քահ. Աղանյանց.— 2-րդ տպագր.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարա-
ձեի, 1893.—24 էջ.

ՊԳ

151. Լակիդե Ա. Երրորդ ոսկի: Առակ Ա. Լակիդեի: /Պարզեա-
տրված Ս. Պետերբուրգի ֆրեոբելյան ընկերությունից/ /Թարգմ. Հա-
րություն սարկավագ Աղանյանց (Առաքելյանց.— Թիֆլիս: Տպ.
Ա. Մելիք-Շահնազարյանցի, 1879.—31(1) էջ.

ՊԳ

152. Լանգեր: Մի բառ մինիստրին: Կոմեդիա 1 արար. /Թարգմ.
Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Ն. Աղան-
յանի, 1911.—39 էջ.— (Թատրոնական գրադ.—ն).

Ժողովրդական հանրամատչելի պիեսների շարքից կատարված
թարգմանություններ են, «Թատրոնական գրադարան» մատենաշա-
րից վերցված: Այդ թարգմանությունները բնագրից կատարել է և
մատենաշարը կազմել է Գր. Ավետյանը:

Կազմակից է Գր. Ավետյանի՝ «Թատրոնական գրադարան»
գրքին, հտ. 2, էջ 101—140:

ՊԳ

153. Լեբեդև Կ. Ա. Անմահական ջուր: /Հնդկական լեգենդա/
/Թարգմ. Մարկոս ք. Տեր-Մկրտչյանց.— Սամարղանդ: Տպ. Բ. Ղա-
զարյանի և Կ. Սիլյանի, 1911.—20 էջ.— (Ժողովրդական ընթեր-
ցարան № 1):

ՊԳ

154. Լեշկե Ա. Ուսման սերը: /Պատմվածք/ /Թարգմ. ռուս.—

Ս.— Պետերբուրգ, Հրատ. Տ. Զաբելի, տպ.; Պուշկինյան արագատիպ», 1905.—60 էջ.— (Մեր էժանագին գրադարանը).

ՊԳ

155. Լեւոնտով Մ. Յու. Աշղղ Ղարիբ: /Տաճկական հեքիաթ/ /Թարգմ. Կար. Միրիանյան.— Թիֆլիս: Տպ. Ճերմես», 1911.—24 էջ, նկ.— (Ժողովրդական գրագ-ն).

Սույն հրատարակությունը լույս է տեսել «Ժողովրդական գրադարան» մատենաշարով:

ՊԳ

156*. Լեւոնտով Մ. Յու. Բելա /Ռուս. Թարգմ. Ա.— Բագու, տպ. «Արոր» 1898.—102 էջ.

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 1028. «Տարաղ», 1898,
№ 16, էջ 344.

157*. Լեւոնտով Մ. ՅՈՒ. Բերա /Ռուս. Թարգմ. Հովհաննես Մալխասյան.— Ս.— Պետերբուրգ, 1890.—42 էջ.

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 1018.

158*. Լեւոնտով Մ. ՅՈՒ. Դև /Թարգմ. Ա. Միրզոյանց.— Թեհրան: Տպ. «Մոդերն», 1907.—54 էջ.

Տես՝ Մ. Лермонтов в армянских переводах... (1843—1966 гг.). Ер., 1981,
с. 32.

159. Լեւոնտով Մ. Յու. Դև /Արևելյան վեպ/ /Թարգմ. ռուս. Հ. Զ. Միրզոյանց.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հրատարակչ. ընկ., տպ. վրաց. էլեկտրաշարժ. տպագր., 1901.—56(2) էջ, 1 թ. նկ.

Թարգմանությունը կատարվել է բնագրից, չափածո: Գրքույկում զետեղված է Թարգմանչի համառոտ առաջաբանը:

ՊԳ

160. Լեւոնտով Մ. Յու. Դև: Արևելյան վեպ (1829—1838),
Հրատ. Սարգիս Աղամալյանի, տպ. «Արոր», 1901.—48 էջ, 5 թ. նկ.

Գրքույկում զետեղված է հրատարակչի համառոտ խոսքը սույն Թարգմանության առթիվ:

ՊԳ

161. Լեւոնտով Մ. Յու. Դև: Արևելյան վեպ /Թարգմ. Մելքոն Այտընյան.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1898.—48 էջ.

ՊԳ

162. Լեւմոնաով Մ. Յու. Դև: Արեւելյան վիպասանությունի /Թարգմ. Մ. Սադաթյանց.— Թիֆլիս: Հրատ. «Աղբյուր» և «Տարազ»-ի, տպ. Տ. Նազարյանցի, 1891.—57 էջ, 1 թ. դիմանկ., նկ.

Բանաստեղծ Մանուկ Սադաթյանի կողմից կատարված այս թարգմանությունը համարվում է որպես թարգմանական գործի լավագույն նմուշներից մեկը:

ՊԳ

163*. Լեւմոնաով Մ. Յու. Դև /Թարգմ. Մ. Գարաբաշյան.— Կ. Պոլիս, 1879.

Տես՝ Դանիելյան Ս. «Լեւմոնաովը և հայ մշակույթը» գրքում, 1960, էջ 244.

164. Լեւմոնաով Մ. Յու. Դիմակահանդես: Դրամա 4 արար. /Թարգմ. Հ. Զանումյանց.— Մոսկվա: Տպ. Մկրտիչ Բարխուդարյանի, 1891.—115 էջ.

ՊԳ

165. Լեւմոնաով Մ. Յու. Հաջի Աբրեք /Թարգմ. Սիմ. Հովլովյան.— Բագու: Հրատ. Գրասերի, տպ. Ա. Մ. Ղազարյանի, 1897.—23 էջ.

ՊԳ

166. Լեւմոնաով Մ. Յու. Մաքսիմ Մաքսիմիչ /Թարգմ. Ա.— Բագու: Տպ. Ա. Ղազարյանի, 1898.—30 էջ.

Թարգմանչի մասին տեղեկությունները լրիվ չեն: Շպկ-ի վրա նշված է՝ «Հրատարակիչ Մ. Սուլթան»:

ՊԳ

167. Լեւմոնաով Մ. Յու. Մծիրի /Թարգմ. Հովհաննես Թումանյան.— Թիֆլիս: Հրատ. Փիլիպպոս Վարդազարյանի, տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1896.—35 էջ.

Հովհ. Թումանյանի այս թարգմանությունն ինչպես հայտնի է, համարվում է որպես թարգմանական արվեստի դուրս գործոցներից մեկը:

ՊԳ

168. Լեւմոնաով Մ. Յու. Փախստական: Լեռնական լեգենդա /Թարգմ. Գ. Հայկունի.— Մոսկվա: Հրատ. Հայկ. գործերի կոմիտեի, տպ. կենտր. հայկակ. կոմիտար., 1919.—8 էջ.

ՊԳ

169. ԼԵՐՄՈՆՏՈՎ Մ. ՅՈՒ. Փախստական: (Լեռնային լեզենդա) /Թարգմ. Հ. Տ. Գ.— Բագու, տպ. «Արոր», 1904.—15 էջ.

ՊԳ

170. Լիսենկո-Կոնիչ Ի. Ընդունելության օրը: Վոդըվիլ 1 գործող. /Թարգմ. Գեորգ Մելիքյանց.— Ս.— Պետերբուրգ: Տպ. «Պուշկինյան արագատիպ», 1904.—41 էջ.

ՊԳ

171. Լիսենկո-Կոնիչ Ի. Վերոչկի գաղտնիքը: Վոդըվիլ 1 արար. /Թարգմ. ռուս. Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Կալստյանի, տպ. Ն. Աղանբանի, 1911.—40 էջ.

Սույն հրատարակությունը կազմակից է՝ «Թատրոնական գրադարան» մատենաշարին.— Տես՝ ալիգ. 2, էջ 101—140.

ՊԳ

172. Լիսենկո-Կոնիչ Ի. Վերոչկի գաղտնիքը: Վոդըվիլ 1 արար. /Թարգմ. Գր. Ավետյան.— Թիֆլիս, 1903.—40 էջ.

Կազմակից է «Թատրոնական գրադարան» մատենաշարին.— Տես՝ ալիգ. 2.

ՊԳ

173. ԼՐՄԵՆ: Բանվորների կյանքից: Պատմվածք:— Ս.— Պետերբուրգ: Հրատ. տիկ. Զաբելի, 1905.— էջ 53—62.— (Մեր էժանագին գրադարանը, № 9).

Թարգմանչի և թարգմանության մասին տեղեկություններ չկան: Սույն պատմվածքը տպակից է Պրոսպեր Մերիմեի «Մաթեո ֆալկոնե» գրքույկին.— Տես. ալիգ. 3.

ՊԳ

174. ԼՈՒԽԱՆՈՎ: Նապոլեոնի մահը: Դրամա 1 գործող. /Թարգմ. Դավիթ Գուլազյան.— Թիֆլիս: Տպ. «Էպոխա», 1914.—16 էջ.

ՊԳ

175. ԼՈՎԿԱՆԻՉ Կ. Աղքատ դպրոցականը /Թարգմ. Մ. Ս.— Թիֆլիս: Հրատ. «Նվեր մանուկներին» ընկ., տպ. «Էժապերանտո», 1912.—52 էջ, նկ.— (Նվեր մանուկներին).

Թարգմանված է բնագրից, արևելահայ լեզվով: Նախատեսված է ցածր և միջին տարիքի երեխաների համար:

Շպկ-ի 2-րդ և 3-րդ էջերի վրա տպագրված է «Նվեր մանուկ-ներին» ընկ. հրատարակությունների գրացուցակը:

Հեղինակ՝ Կլավդիա Լուկաշևիչ:

ՊԳ

176. Լուկաշևիչ Կ. Ծաղիկների մեջ: Ֆանտաստիկական կոմեդիա մանուկների համար: 2 արար. երգերով և պարերով /Թարգմ. Կ. Թառլանյան.— Թիֆլիս, Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. Ն. Աղանյանի, 1910.—32 էջ.

ՊԳ

177. Լուկաշևիչ Կ. Մեղանչել եմ, /Պատմվածք կյանքից/ /Թարգմ. Աստվածատուր Բեկ. Հովսեփյան.— Թիֆլիս, Հրատ. «Աղբյուր-Տարագի», տպ. «Պրոգրես» ընկ., 1909.—29(1) էջ, նկ.

Շպկ-ի 2-րդ էջի վրա տպագրված է Թարգմանչի աշխատությունների ցուցակը՝ «Աստվածատուր Բեկ. Յովսեփյանի լույս տեսած աշխատութիւնները» խորագրով:

Շպկ-ի վերջին էջի վրա՝ «Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան»:

ՊԳ

178. Լուկաշևիչ Կ. Որբ Աննան /Ռուս. թարգմ.— Թիֆլիս: Տպ. «Հերմես» ընկ., 1904.—56 էջ.— (Նվեր մանուկներին).

Կազմակից է Ույդի «Նեկուն և Պատրաշը» գրքին.— Տես՝ ալիգ. 2.

ՊԳ

179. Լուկաշևիչ Կ. Քեռի Մկո: Պատմվածք: /Պետերբուրգի ֆրեոբելյան ընկ. մրցանակաբաշխության արժանացած/ /Փոխադր. Կար. Միրիանյան.— Թիֆլիս, Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. Ն. Աղանյանցի, 1909.—24 էջ, նկ.

Նախատեսված է դպրոցական երեխաների ընթերցանության համար:

ՊԳ

180. Խերամ Ա. Կյանքի գնով: /Պատմվածք/ /Ազատ թարգմ. Հ. Փ. և Մ. Շ.— Բագու: Տպ. առաջին տպարանական ընկ., 1902.—14 էջ.

ՊԳ

181. Խոլոստով: Չարագուշակ նատարան: Վոդրվիլ 1 արար.

Դժարգմ. Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Ն. Աղանյանի, 1911.— էջ 230—258.— (Թատրոնական գրադ-ն).

Սույն հրատարակությունը լույս է տեսել «Թատրոնական դրադարան» մատենաշարով, որը թարգմանված և կազմված է Գր. Ավետյանի կողմից.— Տես՝ հտ. 2, ալիգ. 6.

ՊԳ

182. Մաղկաֆաղ առական Բռնիովի, Տմիթրիևի և Նեմնիցերի: (Բ. տիտղթ.) /Թարգմ. Հարություն ավագ սարկ. Կեոքլյանց.— Մոսկվա: «Ի տպագրատուն Վլադիմիրայ Կոտիէ», 1849.—147(4) էջ, 5 ներդիր թ. նկ.— Տեքստը՝ ռուսերեն և հայերեն:

Բովանդ.: Մանոթաբան /թարգմանչի կողմից/: Ագուստ և աղվես: Ստախոս: Մենավաճառ և կոշկակար: Գալլ և բառն: Աղվես և մուկն վայրենի: Կարապ, ձուկն և խեցգետին: Երաժիշտը: Ագահ և հավ: Կապիկ և ակնոց: Ճանճ: Նապաստակ որսի: Մեծատուն և փիլիսոփա: Փիղ դատավոր: Սագը: Պատգամախոս: Հարուստ և աղքատ: Պարնասյան լեան: Արծիվ և հավը: Գյուղական մահ: Կապիկը: Աղվես և խաղող: Տանուտեր և մկունք: Արծիվ և սարդ: Հայելին և կապիկ: Ճանապարհորդ և շունք: Գորտ և ցուլ: Առյուծ և գալլ: Մեռելաթաղ: Մեծատուն: Հարսն այրելու տիր: Բան ոսկերաց: Ցանկ:

Գրաբար թարգմանություն՝ ռուսերեն բնագրից, չափածո:

Դրքում ղետեղված է թարգմանչի համառոտ առաջաբանը՝ «Մանոթաբան» խորագրով:

Գիրքն ունի Ա և Բ տիտղթ.՝ ռուսերեն և հայերեն:

ՊԳ

183. Մաղկունգ /Թարգմ. (Եզեկյան) Պրոսյանց (Ա. Մ.).— Թիֆլիս, 1883.—23 էջ.

Բովանդ.: Նախաբան թարգմանչի: Լալկան ժայռն /լերմոնտով/: Ամպը /լերմոնտով/: Վիրավորն /լերմոնտով/: Գորնլեյավերշինի /լերմոնտով/: Հրաժեշտի ողջույն Կասպիականին /Բ. Մարլինսկի/...

Սույն հրատարակությունը իրենից ներկայացնում է չափածո և արձակ ընտիր հատվածների ժողովածու: Թարգմանչի մասին տվյալները վերցված են նախաբանից:

ՊԳ

184*. Միծեռնակի բունը /Թարգմ. Եղիսաբեթ Ալիխանյան և Արծրունի.— Եր.: Տպագր. «Պսակ» լրագրի, 1881.—41 էջ.

Հեղինակի մասին նշում չկա: Նկարագրված է մատենագիտական և բանասիրական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 1219. «Մուրճ», 1899, № 9, էջ 1236, «Մուրճ», 1906, № 1, էջ 162.

185. Մենդյան պատմությունը և մայիսյան տոնը Ֆինլանդիայում: Վեպիկներ մանր երեխանց համար /Թարգմ. ռուս.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայերեն գրքերի հրատարակչ. ընկ., տպ. Մովս. Վարդանյանցի և ընկ., 1882.—34 էջ.

Հեղինակի և թարգմանչի մասին չի նշված:
ՊԳ

186*. Կ. (Տ. Ս.): Որբուկի օրը /Ռուս. թարգմ.— Ախալցխա: Տպ. Մ. Ղալամքարյանի, 1891.—24 էջ.

Տես նաև՝ Որբուկի օրը...

Տես՝ Ղ. հտ. 1, էջ 1221.

187. Կախանովսկի Վ. Վերադարձ /Թարգմ. Մենիկ Թումանյան.— Մոսկվա: Տպ. Ք. Բարխուդարյանի, 1907.—12 էջ.

Սույն պատմվածքին տպակից է նաև Վ. Դորոշևիչի «Զարամիտ»-ը Մենիկ Թումանյանի թարգմանությամբ (էջ 13—23):
ՊԳ

Տես նաև՝ Կոխանովսկի Վլ.

188. Կառավզին Ն. Մ. Թշվառ Լիզա /Թարգմ. Դ. Տեր Դավթյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Վարդանյանցի, 1891.—47 էջ.— Տիտղթ. վրա՝ «Աղբիւր» և «Տարազ»-ի բաժանորդներին՝ նվեր թարգմանչից»:
ՊԳ

189*. Կառեմն ու Մանենը. կամ քույր և եղբայր /Հեքիաթ/ /Փոխադր. Լևոն Մելիք-Աղամյանց.— Թիֆլիս: Հայոց հրատ. ընկ., տպ. Մնացական մարտիրոսյանցի, 1899.—24 էջ.

Հեղինակը չի նշված: Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա:

Տես՝ Ղ. Հտ. 1, էջ 1257.

190. Կառմիր ծաղիկ: Աշակերտական պիես 3 պատկ. և նոտերով /Փոխադր. Ս. Գրիգորյան /«Գարուն կանաչ» երգի նոտերով/.— Թիֆլիս: Հրատ. «Յուշարար»-ի, տպ. Մ. Ռոտինյանցի, 1908.—8 էջ.

Հեղինակի և թարգմանության մասին հիշատակություն չկա։
Նախատեսված է մանուկների համար։

Նկարագրությունն արված է շպկ-ից։

Տեքստի ուսումնասիրությունը ջուլց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից։

ՊԳ

191. Կառավիճ վ. Բեպպո /Ռուս. թարգմ.— Թիֆլիս։ Տպ. Մ. Շարաձեի, 1896.—40 էջ.

ՊԳ

192*. Կնոջ գաղտնիքը Պատմվածք /Թարգմ. Գևորգ Բաբուրյան.— Թիֆլիս, 1904.—16 էջ.

Հեղինակի և թարգմանության մասին չի հիշատակված։ Նկարագրված է մատենագիտական աղբյուրների հիման վրա։

Տես՝ «Գրացուց. Պ. Պալենց Գրատուն»,
Կ. Պոլիս, 1913, էջ 45.

193. Կոզլով վ. Ե. Քարը երգում է։ Կովկասյան լեզենդա /Ռուս փոխադր. Հ. Դուրբախյան.— Ս.— Պետերբուրգ։ Հրատ. տիկ. Զաբելի, «Պուշկինյան տպարան», 1904.—63 էջ.— (Մեր էժանագին գրադարանը)։

Լույս է տեսել «Մեր էժանագին գրադարանը» հանրամատչելի սերիայով։

ՊԳ

194. Կոխանովսկի վ. Վերադարձ /Թարգմ. Մենիկ Թումանյան։ /Դորոշևիչ։ Զարամիտ։ Պարսկ. հեքիաթ/.— Մոսկվա։ Տպ. Բարխուդարյանի, 1907.—23 էջ.

ՊԳ

195. Կոնդուրովի Ի. Շոգենավի վրա, Բարանով Ա.. Ստորագրություն /Ռուս. թարգմ. Արմեն Սյունի.— Բագու Տպ. Ն. Նրևանցյանի, 1912.—23 էջ.

Գրքույկում երկու պատմվածքները տպակից են— Տես՝ նաև Բարանով Ա.

ՊԳ

196*. Կոտ-Մուլիկա։ Երկու երեկո /Կոտ-Մուլիկայից։ Աղբատ մարդիկ /Վեսելիտսկայա/։ Պատմվածքներ/.— Ա. տ. և թ.—31 էջ.

Գրքույկն առանց անվանաթերթի է։ Տեղեկությունները վերցված են տեքստի 3-րդ և 11-րդ էջերից։ Թարգմանչի մասին տեղե-

կություններ չկան: Կոտ-Մուռլիկա-յի «Երկու երեկո» գրքույկին տպակից է Վեսելիտսկայայի «Աղքատ մարդիկ» պատմվածքը, էջ 11—31.

Գրքույկը նախատեսված է փոքր և միջին տարիքի երեխաների համար:

ՊԳ

197. Կոտ-Մուռլիկա: Ի՞նչ է հեքիաթը /Թարգմ. Ղազարոս Աղայան.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1898.—35 էջ.

Գրքույկում զետեղված է (էջ 4) խմբագրական մասնաժողովի համառոտ ծանոթությունը հեղինակի (Կոտ Մուռլիկա— պրոֆ. Վագների) սույն հեքիաթի թարգմանության վերաբերյալ: Նախատեսված է մանուկների համար: Հեղինակը՝ Կոտ Մուռլիկա (պրոֆ. Վագներ),

Շպկ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի վրա տպագրված է Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկ-թյան հրատարակությունների գրացուցակը (145 անուն):

Տես նաև՝ Վագներ Ն. Պ.

ՊԳ

198. Կոտ-Մուռլիկա: Փոքրիկ Ցոլակն ու խլըշիկ նապաստակը: Զրույց: Պատկերազարդ./Փոխադր. Լևոն Մելիք-Ադամյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1904.—90 էջ, նկ.— (Մանկական գրադ-ն).

Շպկ-ի վերջին էջի վրա տպագրված է թարգմանիչ Լևոն Մելիք-Ադամյանցի կողմից թարգմանված և փոխադրված հրատարակությունների գրացուցակը՝ ձեռն թարգմանությամբ և փոխադրությամբ լույս են տեսել» խորագրով (23 անուն):

Տես նաև՝ Վագներ Ն. Պ.

ՊԳ

199. Կործինսկայա Ս. Փոքրիկ Լևոնի գաղտնիքը /Թարգմ. ռուս. Մ. Ս.— Թիֆլիս: Հրատ. «Նուեր մանուկներին», տպ. Ն. Աղանյանցի, 1909.—23 էջ.— (Նվեր մանուկներին). Թարգմանիչը վերծանված չէ: Թարգմանությունը կատարված է բնագրից:

ՊԳ

200. Կորոլենկո Վ. Ակամա մարդասպան /Թարգմ. Տ. Հովհան-

նիսյան.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Ռոտինյանցի, 1896.—64 էջ.

Վ. Կորոլենկոյի երկերը թարգմանված են ռուսերեն բնագրից, արևելահայերեն: Գրքում զետեղված է Թիֆլիսի հայ հրատարակչական ընկերության հրատարակությունների գրացուցակը (Տես՝ շալկ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերը):

ՊԳ

201. Կորոլենկո Վ. Գետնափորի երեսաները /Ռուս. թարգմ.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1896.—78 էջ.

Թարգմանչի մասին տիտղթ. վրա նշումներ չկան: Նախատեսված է մանուկների համար:

ՊԳ

202. Կորոլենկո Վ. Գետնափորի երեսաները /Ռուս. թարգմ.— Թիֆլիս: Հայոց հրատ. ընկ., 1895.—78 էջ.

Թարգմանչի մասին գրքույկում չի հիշատակված: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

ՊԳ

203. Կորոլենկո Վ. Դատաստանի օրը /Պատմվածք/ /Թարգմ. Մուշե վարդապետ.— Թիֆլիս: Հրատ. «Առամա» երկամսյա հանդեսի, տպ. Մ. Ռոտինյանցի, 1902.—72 էջ, 1 թ. դիմանկ.

Արտատպված է «Առամա» հանդեսից: Գրքի վերջում շալկ-ի վրա զետեղված է հրատարակչության կողմից լույս տեսած գրականության ցուցակ:

ՊԳ

204. Կորոլենկո Վ. Կույր երաժիշտը: /էտյուդ/ /Թարգմ. Մուշե վարդապետ.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի և ընկ., 1901.—205(1) էջ.

Գրքի վրա զետեղված է Թարգմանչի ինքնագիրը ուղղված Սերբրիակյանցին:

ՊԳ

205. Կորոլենկո Վ. Մենաքեմ Գամաղայու պատմությունը /Վլ. Կորոլենկոյից.— Մ.— Պետերբուրգ: Տպ. Ի. Ն. Սկորինսկոյի, 1888.—59 էջ.

Թարգմանչի մասին գրքույկում չի հիշատակված:

ՊԳ

206. Կոխով Ի. Ա. Առակք Քոխովի՝ Յինն գիրս /Թարգմ. յաշ-

խարհիկ թարբառ Գաբրիել Թրքեպ. Այվազյան.— Ձրդ տպագր.—
Վաղ-պատ: Տպ. Ս. էջմիածնի, 1896.— (Ե. ԿԴ). 407 էջ.

Բովանդ.: Առաջաբան թարգմանչին /էջ Ե—Է/— Վարք Հովհաննու
Քոիլովի /էջ՝ Թ—ԼԵ/; Գաբրիել արքեպիսկոպոս Այվազ-
յան /Ակնարկ թարգմանչի կրանքի և կենսագրության վե-
րաբերյալ /Գրեց՝ Նիկ. Քարամյանց: էջ՝ Լ—ԿԴ/; Գիրք
առաջին: Ազոալ և աղվես; Կաղնի և եղեգն; Երաժիշտք;
Ազոալ և հալ; Սնդուկ; Գորտ և եգ; Փնասցու չհավանող
հարս; Պառնաս; Պատգամախոս; Տերուկ; Անտառ և
կրակ; Սարեկ և ողնի; Գայլ և քառն; Կապիկք; Ցախսա-
րեկ; էջ; Կապիկ և ակնոց; Երկու աղավնիք; Եռամուսին;
Գիրք Բ. Անաստվածք; Արծիվ և հավք; Գորտերուն թա-
գավոր խնդրելը; Առյուծ և հովազ; Իշխան և փիլիսոփա
Մահ կենդանյաց; Շուներուն բարեկամությունը; Բաժինք;
Տակառ; Գայլն ի շնքակին; Առվակ; Աղվես և կուզ;
Անցորդք և շունք; Ծըպուռն և մրջյուն; Ստախոս; Արծիվ
և մեղու; Նապաստակ որսի; Կատվածուկ և կատու; Գայլ
և կկու; Աքաղաղ և մարդարիտ; Գյուղական և մշակ; Սալ-
լեր; Ազոավիկ; Փղին զորավարությունը; էջ և սոխակ;
Գիրք Գ. Մենավաճառ և կոշկակար; Գեղացվոյն փորձան-
քը; Տանուտեր և մկունք; Փիղ և քոթոտ; Գայլ և կորյուն;
Կապիկ; Տոպրակ; Կատու և խոհակիր; Առյուծ և մոծակ;
Պարտիզական և գիտնական; Գեղացին և աղվես; Առյու-
ծին կրթությունը; Մեր և երեք պատանիք; Մառ; Սագեր;
խոզ; Ծանճ և ճամփորդներ; Արծիվ և մամուկ; Եղնիկ և
տերվիչ; Շուն; Արծիվ և խլուրդ; Գիրք Դ. Քառաձայն
դաշնակություն; Տերեք և արմատք; Գայլ և աղվես;
Փռռան; Կարապ, ձուկ և խեղափար; Սարյակ; Ծահիճ և
գետ; Թոռնիկին կապան; Մեքենագետ; Կրակ և աղա-
մանդ; Ծղնավոր և արջ; Մաղկունք; Գյուղական և օձ;
Գյուղական և ավազակ; Հետաքրքիր; Առյուծին որսոր-
դությունը; Ձի և հեծյալ; Գյուղականք և գետ; Բարեսիրտ
աղվես; Ժողով կենդանյաց; Գիրք Ե. Թաթուլին դալաճ-
օշը; Մուկ և մուկիկ; Դեղձանիկ և աղավնյակ; Լուրորդք;
Տանտիկին և երկու աղախինները; Քար և թրթուր; Արջն
ի մեղվանոցին; Հայելի և կապիկ; Հովիվ և մոծակ; Գյու-

ղական և մահ; Ասպետ; Շուք և երիտասարդ; Գյուղական
և կացին; Առյուծ և գայլ; Շուն, մարդ, կատու և բազե;
Փոտակրա և մամուկ; Աղվես և առյուծ; Բաղեղն; Փիղն
ի պատվի; Ամպ; Զրպարտիչ և օձ; Բաղդ և աղբատ;
Գորտ և Դիոս; Տնաշեն աղվես; Զրպարտություն; Բախտը
հյուր եկած; Գիրք Զ. Գայլ և հովիվք; Կկու և տատրակ;
Սափտր; Ագահն և հավ; Երկու տակառք; Ալիդես; Ապե-
ղես և ավանակ; Որսորդ; Մանուկ և օձ; Նավորդ և ծով;
էշ և գեղացի; Գայլ և կռունկ; Մեղու և ճանճք; Մրճյուն;
Հովիվ և ծով; Գյուղական և օձ; Աղվես և խաղող; Ոչ-
խարք և շունք; Արջն ի թակարդի; Ցորենի հասկ; Ման-
կիկ և թրթուր; Թաղումն; Աշխատասեր արջ; Մատենա-
գիր և ավազակ; Դառնուկ; Գիրք է. Ժողով Մկանց; Զա-
ղացպան; Հասարակ քար և աղամանդ; Շուշն և ծիծա-
ռըն; Քարթակ; Գյուղական և օձ; Կաղնիին տակի խոզը;
Մամուկ և մեղու; Աղվես և էշ; Ճանճ և մեղու; Օձ և
գառնուկ; Խալիին և պտուկ; Վայրի այծեր; Սոխակներ;
Թերմաշ ավել; Գյուղական և ոչխար; Ագահ մարդ; Մե-
ծատունն և բանաստեղծ; Գայլ և Մուկ; Երկու գեղացիք;
Կատվի ձագ և սարյակ; Երկու շունք; Կատու և սոխակ;
Ջկանց կաքավը; Մխական ժողովուրդ; Աղուավ; Գիրք Ը.
Առյուծ ծերացյալ; Առյուծ, եղջերու և աղվես; Գյուղա-
կան և ձի; Սկյուռ; Կատվածուկ; Բուբուկ և արծիվ; Ածե-
լիք; Բազե և թրթուր; Հարուստ մուրացկան; Պողովատիկ;
Խանութպան; Թնդանոթք և առագաստք; էշ; Միռն; Գյու-
ղական և աղվես; Շուն և ձի; Բվիճակ և էշ; Օձ; Գայլ և
կատու; Տառխ; Զրվեծ և առվակ; Առյուծ; Երեք գյուղա-
կանք; Գիրք Թ. Հովիվ; Սկյուռ; Մկունք; Աղվես; Գայլք
և ոչխարք; Գյուղական և շուն; Երկու տղանք; Ավազակ և
սայլավար; Առյուծ և մուկ; Կկու և աբլոր; Իշխան; Յանկ
նյութոց:

Աշխարհաբար թարգմանություն ռուսերեն բնագրից, արևելա-
հայերեն:

Գրքում զետեղված է թարգմանչի առաջաբանը՝ Կոիլովի առակ-
ների թարգմանության և 2-րդ հրատարակության առթիվ: Այնու-
հետև Թ—ԼԾ էջերում՝ Կոիլովի կենսագրությունը՝ «Վարք Յովհան-

նու Քոիլովի խորագրով: Լ—ԿԴ էջերում տպագրված է նիկ. Քա-
րամյանցի հոդվածը նվիրված թարգմանիչ Գաբրիել Արքեպիսկո-
պոս Այվազյանի կյանքին ու գործունեությանը (1812—1880):

ՊԳ

207. Կոիլով Ի. Ա. Առակք Քոիլովի: Յինն գիրս /Թարգմանեաց
յաշխարհիկ բարբառ Գաբրիել եպիսկոպոս Այվազյան.— Կ. Պոլիս:
Տպագր. Արամյանի, 1870.—436 էջ, նկ.

Բովանդ.: Յառաջաբան թարգմանչին; Վարք Յովհաննու Քոիլովի
(Պլետենե); Առակք Քոիլովի: Գիրք Ա. Ագուավ և աղվես;
Կաղնի և եղեգն; Երաժիշտք; Ագուավ և հավ; Սնտուկ;
Դորտ և եզ; Փեսացուին չհավնող հարսը; Պառնաս; Պատ-
գամախոս; Տերուկ; Անտառ և կրակ; Սարեկ և ողնի; Գայլ
և դառն; Կապիկք; Յախաարեկ; էջ; Կապիկ և ակնոց; Եր-
կու աղավնիք; Ոսկի; Նոամուսին; Առակք Քոիլովի.
Գիրք Բ. Անաստվածք; Արծիվ և հավք; Գորտերուն թա-
գավոր խնդրելը; Առյուծ և հովազ; Իշխան և փիլիսոփայ;
Մահ կենդանյաց; Շուններուն բարեկամությունը; Բա-
ժինք; Տակառ; Գայլն ի շնրակին; Առվակ; Աղվես և կուզ;
Անցորդք և շունք; Ծպուռն և մրջյուն; Ստախոս; Արծիվ
և մեղու; Նապաստակ որսի; Կատուածագ և կատու; Գայլ
և կկու; Աքաղաղ և մարգարիտ; Գյուղական մշակ; Սայ-
լեր; Աղուավուկ; Փղին զորավարությունը; էջ և սոխակ;
Առակք Քոիլովի: Գիրք Գ. Մենավաճառ և կոշկակար;
Գեղացվույն փորձանքը; Տանուտեր և մկունք; Փիղ և
քոթոթ; Գայլ և կորյուն; Կապիկ; Տոպրակ; Կատու և խո-
հակեր; Առյուծ և մոծակ; Պարտիզպան և գիտնական;
Գեղացին և աղվես; Առյուծին կրթությունը; Մեր և երեք
պատանիք; Մառ; Սագեր; Խոզ; Ծանճ և ճամբորդներ;
Արծիվ և մամուկ; Եղնիկ և տերվիշ; Շուն; Արծիվ և
լուրդ; Առակք Քոիլովի: Գիրք Դ. Քառաձայն դաշնա-
կություն; Տերեք և արմատք; Գայլ և աղվես; Փռոռն;
Կարապ, ձուկ և խեչափար; Սարյակ; Ծահիճ և գետ;
Թռռնիկին կապան; Մեքենագետ; Կրակ և աղամանդ;
Ծգնավոր և արջ; Մաղկունք; Գյուղական և օձ; Գյուղա-
կան և ավազակ; Հետաքրքիր; Առյուծին որսորդությունը;
Զի և հեծյալ; Գյուղականք և գետ; Բարեսիրտ աղվես;

Ժողով կենդանաց; Առակք Քոիլովի Գիրք Ե. Թաթուլին
 գալաճոշը; Մուկ և մուկիկ; Դեղձանիկ և աղալնյակ; Լու-
 ղորդք; Տանտիկին և երկու աղախինները; Քար և թրթուր;
 Արջն ի մեղվանոցին; Հայելի և կապիկ; Հովիվ և մոծակ;
 Գյուղական և մահ; Ասպետ; Շոք և երիտասարդ; Գյու-
 ղական և կացին; Առյուծ և գայլ; Շուն, մարդ, կատու և
 բազե; Փոստակրա և մամուկ; Աղվես և առյուծ; Բաղեղն;
 Փիղն և պատիվ; Ամպ; Զրպարտիչ և օձ; Բաղդ և աղ-
 քատ; Գորտ և Դիոս; Տնաշեն աղվես; Զրպարտություն;
 Բաղդը հյուր եկած; Առակք Քոիլովի Գիրք Զ. Գայլ և
 հովիվք; Կկու և տատրակ; Սանտր; Ագահն և հավ; Երկու
 տակառք; Ալկիդես; Ապեղես և ավանակ; Որսորդ; Մանուկ
 և օձ; Նավորդ և ծով; էշ և գեղացի; Գայլ և կռունկ; Մե-
 ղու և ճանճք; Մրջյուն; Հովիվ և ծով; Գյուղական և օձ;
 Աղվես և խաղող; Ոչխարք և շունք; Արջն ի թակարդ; Ցո-
 բենի հասկ; Մանկիկ և թրթուր; Թաղումն; Աշխատասեր
 արջ; Մատենագիր և ավագակ; Գառնուկ; Առակք Քոիլո-
 վի Գիրք Է. Ժողով մկանց; Զաղացպան; Հասարակ քար
 և աղամանդ; Շոպյն և ծիծառն; Քարթակ; Գյուղական և
 օձ; Կաղնիին տակի խոզը; Մամուկ և մեղու; Աղվես և
 էշ; Ճանճ և մեղու; Օձ և դառնուկ; Խալիին և պտուկ;
 Վայրի այծեր; Սոխակներ; Թերմաշ ավել; Գյուղական
 և ոչխար; Ագահ մարդ; Մեծատունը և բանաստեղծը; Գայլ
 և մուկ; Երկու գեղացիք; Կատվի ձագ և սարյակ; Երկու
 շունք; Կատու և սոխակ; Զկանց կաքավը; Մխական ժո-
 ղովուրդ; Ագռավ; Առակք Քոիլովի Գիրք Ը. Առյուծ ծե-
 րացյալը; Առյուծ, եղջերու և աղվես; Գյուղական և ձի;
 Սկյուռ; Կատվաձուկ; Ռուբուկ և արծիվ; Ածելիք; Բազե և
 թրթուր; Հարուստ մուրացկան; Պողովատիկ; Խանութպան;
 Թնդանոթք և առաքաստք; էշ; Միռոն; Գյուղական և աղ-
 վես; Շուն և ձի; Բըվիճակ և էշ; Օձ; Գայլ և կատու; Տա-
 ռեխ; Զրվեժ և առվակ; Առյուծ; Երեք գյուղականք;
 Առակք Քոիլովի Գիրք Թ. Հովիվ; Սկյուռ; Մկունք; Աղ-
 վես; Գայլք և ոչխարք; Գյուղական և շուն; Երկու տղաք;
 Ավագակ և սայլավար; Առյուծ և մուկ; Կկու և աքլոր;

Իշխան; Ցանկ նյութոց; Ցանկ նյութոց ըստ այբբենական
կարգի:

Գրքում զետեղված են՝ Թարգմանչի առաջաբանը և Կոիլովի
կենսագրականը, որը գրված է ռուս ականավոր մատենագիր Պլետ-
նյովի կողմից:

ՊԳ

208. Կոիլով Ի. Ա. Հատընտիր առակք Քոիլովի /Թարգմանեալք
յաշխարհիկ ըարբստ /Թարգմ. Գաբրիել Վ. Այվազյան/.— Թեոդո-
սիա: Տպ Խալիպյան ուսում. ազգիս հայոց, 1866.—(Գ—Ը), 160 էջ.
Քովանդ.: Մանուցումն Թարգմանչի /Գաբր. Վ. Այվազյան/, Ցանկ
(հայերեն և ռուսերեն): Առակք Քոիլովի՝ Փիղ և քոթոտ;
Հայելի և կապիկ; Գայլ և հովիվք; Ագռավ և աղվես;
Արծիվ և մամուկ; Կատվածուկ և կատու; Մանկիկ և
թրթուր; Առյուծին կրթությունը; Ածելիք; Քառաձայն
դաշնակություն; Խոզ; Մկունք; Թաթուլին Գալաճօշը;
Կկու և աքլոր; Երկու տակառք; Սագեր; Տակառ; Դյու-
ղական և օձ; Բաժինք; Կապիկ և ակնոց; Կատու և խոհա-
կեր; Սանտր; Անցորդք և շունք; Գեղձանիկ և աղավնյակ
Ոսկի; Կապիկ; Զի և տերը; Ճանճ և մեղու; էշ և սոխակ;
Աղվես և կուզ; Գայլ և կկու; Զրպարտություն; Նապաս-
տակ որսի; Կապիկք; Թոռնիկին կապան; Հետաքրքիր;
Սարլակ; Գեղացվոյն փորձանքը; Դյուղակարն և մշակ;
Կարապ, ձուկ և խեչափար; Շներուն բարեկամությունը;
Ստախոս; Արծիվ և հավք; Տերեք և արմատք; Գայլ և
կորյուն; Գորտ և եզ; Գայլք և ոչխարք; Ամպ; Երաժիշտք;
Պառնաս; էշ և գեղացի; Անաստվածք; Զրպարտիչ և օձ;
Աքաղաղ և մարգարիտ; Սալեր; Տոպրակ; Արծիվ և
խլորդ; Բարեսիրտ աղվես; Մանուկ և օձ; Առվակ; Աս-
պետ; Շուն, մարդ, կատու և բազի; Մեղու և ճանճք;
Փղին զորավարությունը; Նավորդ և ծով; Երկու շուն;
Առյուծ և գայլ; Ժողով կենդանյաց; Գառնուկ; Գեղացին
և աղվես; Մուկ և մուկիկ; Հովիվ և մոծակ; Մահ կեն-
դանյաց; Դյուղակառն և ոչխար; Առյուծի որսորդությու-
նը; Դայլ և գառն; Ապեղես և ավանակ; Կատու և սոխակ;
Աղվես և առյուծ; Առյուծ ծերացյալ; Բուքուկ և արծիվ;
Գայլ և կռունկ; Ոչխարք և շունք; Ճգնավոր և արջ; Տան-

տիկին և երկու աղախինները; Ժողով մկանց; Եղնիկ և տերվիշ; Աղվես և էշ; Կաղնիին տակին խոզը; Աշխատասեր արջ; Զրվեժ և առվակ:

Թարգմանչի մասին նշված է գրքի համառոտ ներածության մեջ՝ «Մանուցումն» խորագրով (Գաբր. Վ. Այվազյան):

Թարգմանչի առաջաքանում տրված է Կոիլովի առակաների նշանակության և նրանց թարգմանության մասին համառոտ ծանուցում: Թարգմանությունն աշխարհաբար է, արևելահայերեն:

19-րդ դարի 40-ական թվականներին թարգմանական գրականության մեջ լայնորեն մուտք գործեց առակի ժանրը՝ ինչպես չափածո, այնպես էլ արձակ (գրաբար և մեծ մասամբ աշխարհաբար): Հրատարակվում էին Եզոպոսի, Լաֆոնթենի, Կոիլովի ստեղծագործությունների լավագույն նմուշները:

1866 թ. Թեոդոսիայում Գաբրիել Այվազյանի թարգմանությանը հրատարակվում է Կոիլովի «Հատընտիր առակք Քոիլովի» առակաների ժողովածուն:

ՊԳ

209. Կոիլով Ի. Ա. և ուրիշն. Մաղկաքաղ առակաց Կոիլովի, Դմիտրիևի և Խեմնիցների /Ռուս. թարգմ. Հարություն ավագ սարկավագ Գյուկչյան.— Մոսկվա: Տպ. Վլ. Կոդեե, 1849.—147 էջ, իլ.

Տեքստը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

ՊԳ

210. Կրասնիցկի Ա. Ի. Արցունք, Դպրոցական կեանքից պատմվածք: /Պատվերներով/ /Ազատ թարգմ. Մ. Ս.— Ս.— Պետերբուրգ: Տպ. «Պուշկինյան արագատիպ», 1905.—76 էջ, նկ.— (Նվեր մանուկներին):

Թարգմանիչը վերծանված չէ: Նախատեսված է պատանիների ընթերցանության համար: Սույն հրատարակությունը կազմակից է Ուլգի «Նեկլոն» և Պատրաշը գրքին:— Տես՝ ալիգ. 3.

ՊԳ

211. Կրիստ Մ. Լև Տոլստոյի Կրեյցերյան սոնատի վերջը /Թարգմ. Հ. Մարիկյան.— Վաղ-պատ: Տպ. Ս. էջմիածնի, 1898.—32 էջ.

ՊԳ

212. Կուլեբեցով Ս. Զարմանալի որդ /Թարգմ. Ն. Ղուլիջյանյան.— Թիֆլիս: Տպ. «Հերմես», 1911.—30 էջ, նկ.

Առանց տրտղթ-ի: Նկարագրված է շպկ-ից: Նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

ՊԳ

213. Կուզենցով Ս. Զարմանալի որդ /Թարգմ. Ն. Ղուլիչյան-յան.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1896.—29 էջ, նկ.

ՊԳ

214. Կուլիկովա: Շնիկ /Պատմվածք/ Ս. Պետերբուրգի ֆրեհ-բելյան ընկ. հրատարակությունից /Թարգմ. Աննա Սահակյանց.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. «Արոր», 1981.—28 էջ.

ՊԳ

215. Կուլիլին Մ. Ողնինեի /Թարգմ. Մ. Ս.— Թիֆլիս: Տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1901.—24 էջ, նկ.

Նախատեսված է հոքրահասակ երեխաների համար: Թարգմանիչը վերծանված չէ:

ՊԳ

216. Կուպրիանով Ն. Աշխարհապահ գինվոր.— Թիֆլիս: Տպ. Ն. Աղանյանի, 1912.—32 էջ.

Սույն հրատարակությունը գտնվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանում: Թարգմանչի մասին գրքույկում չի նշված:

ԱԿԳ

217. Կուպրին Ա. Ի. Տրամվայում /Պատմվածք/ /Թարգմ. Օլգա Գենչյան.— Թիֆլիս: Տպ. «Էսպերանտո», 1911.—23 էջ.— (Ռուս նորագույն գրողների № 4).

Սույն հրատարակությունը կազմակից է Լեոնիդ Անդրեևի «Անգղուշություն» պատմվածքին.— Տես՝ ալիգ. 2.

ՊԳ

218. Կուրց Ի. Ճշմարտություն /Թարգմ. ռուս. Ն. Աթանեսյան.— Թիֆլիս: Տպ. Ա. Քուլթաթեյաձեի, 1903.—32 էջ.

ՊԳ

219. Հետաքրքիր աղջիկ /Մանկական վեպիկ/ /Թարգմ. Սեյիադ Ամիրյանց.— Թիֆլիս: Հրատ. Սմբատ-Քեկ Լալայանցի, տպ. Տ. Նազարյանցի, 1891.—30 էջ.

Թարգմանված է ռուսերեն բնագրից, արևելահայերեն։ Այդ հղրակացությունն արվել է տեքստի ռուսումնասիրության հիման վրա։

Գրքույկում հեղինակի մասին տեղեկություններ չկան։ Սույն պատմվածքը նախատեսված է մանուկների ընթերցանության համար և համարվում է որպես մանկական վեպիկների շարքից կատարված թարգմանություններից մեկը։ Վիպակում զետեղված է «Երկու խոսք» հրատարակչի կողմից։

ՊԳ

220. Հոբն Վ. Օ. Անապատում /Թարգմ. Նունե Տեր-Աստվածատուրյանց.— Տիֆլիս (Թիֆլիս)։ Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1878.— 1—3, 103 (I—V) էջ.

Տիտղթ. վրա հեղ.՝ Վ. Օ. Հորնի։ Աշխարհաբար թարգմանություն ռուսերենից, արևելահայերեն։ Սույն վիպակում զետեղված է համառոտ առաջաբան թարգմանչի կողմից։

Կազմակից է Կոստանդին Ապրիլյանի՝ «Հայրենիքից դուրս» գրքին.— Տես՝ ալիգ. 6.

Լույս է տեսել նաև առանձին հրատարակությամբ։

Տեքստի ռուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից։

ՊԳ

221*. Այուն։ Դրամա 4 արար. /Թարգմ. Զալալ Տեր-Գրիգորյան.— Թիֆլիս, 1911.— 62 էջ.

Նկարագրված է մատենադիտական աղբյուրների հիման վրա։ Հեղինակը չի նշված։

Տես՝ «Գրացուցակ Պ. Պալենց գրատուն»,
Թիֆլիս, 1913, էջ 99.

222. Մամիկ-Սիրիքյակ Դ. Ն. Ակ-բուզատ։ Պատկերազարդ հեքիաթ /Ռուս. թարգմ. Ս. Թորոսյան.— Թիֆլիս։ Հրատ. Կովկ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Ն. Աղանյանցի, 1913.— 28 էջ, նկ.— (Մանկական գրադ-ն)։

Սույն հրատարակությունը կազմակից է Ն. Տելեշովի «Սպիտակ տառեղնիկը» գրքին։— Տես՝ ալիգ. 9.

ՊԳ

223. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Լուսատուիկները /Փոխադր. Կ. Կ. Մեկիբ-Շահնազարյանց.— Թիֆլիս: Տպ. Ն. Աղանյանի, 1907.—103 էջ, նկ.— (Նվեր մանուկներին)։

ՊԳ

224. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Մեր ճնճղուկը, ճիճուն, Պառավ մոռանի խոստովանքը /Թարգմ. Ն. Աղանյանց.— Թիֆլիս: Հրատ. «Հասկեր» ամսագրի, տպ. Ն. Աղանյանցի, 1912.—31 էջ։

Շպկ-ի վերջին էջի վրա գետեղված է «Հասկեր» ամսագրի հրատարակությունների գրացուցակը (28 անուն)։

ՊԳ

225. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Հանցանք։ /Պատմվածք/ /Ռուս. Թարգմ. Բ. Մեկ.— Բաղդասարյան.— Թավրիզ: Տպ. «Բանվոր», 1909.—33 էջ։

ԱԿԳ

226. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Հեքիաթներ։ /Փոխադր. Կ. Կ. Մեկիբ-Շահնազարյանց.— Թիֆլիս: Տպ. Ն. Աղանյանի, 1907.—103 էջ, իւ։

ՊԳ

227. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Որդեգիրը; Որսորդի պատմություններից /Ռուս. Թարգմ. Ս. Սառնիկյան.— Թիֆլիս: Հրատ. «Նվեր մանուկներին» ընկ., տպ. Ն. Աղանյանի, 1915.—19 էջ.— Տիտղթ. վրա՝ «Հավելված «Հասկեր» ամսագրի»։

ՊԳ

228. Մամին-Սիբիրյակ Դ. Ն. Պառավ ծիտը /Թարգմ. ռուս. Նդիսաբեթ Սարգսյան.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., Ա. Պողոսյանի, տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1900.— 18 էջ.— (Մանկական գրադ-ն)։

ՊԳ

229. Մայրական սեռ; Բերանժեի կյանքից; Բայրոնի շունը; /Պատմվածքներ իրական կյանքից/ /Ռուս. Թարգմ. Մ. Ա.— Բագու: Տպ. «Տրուդ», 1913.—83 էջ.— (Ժողովրդական գրադ-ն)։

Հեղինակի մասին չի նշված։ Թարգմանչի վերաբերյալ տեղեկությունները լրիվ չեն։ Թարգմանությունը կատարված է ռուսերեն հրատարակությունից։ Սույն պատմվածքը տարակից է նաև «Բերան-ժեի կյանքից» և «Բայրոնի շունը» ստեղծագործություններին։

ՊԳ

230. Մանկական վեպ: /Թղուկ/ /Թարգմ. ռուս. Դարյա Գասպարյան-Սահակյանց.— Թիֆլիս: Տպ. Հ. Մարտիրոսյանցի, 1877.— 26 էջ.

Աշխատութիւնը թարգմանված է ռուսերենից, արեւելահայերեն: Հեղինակի մասին գրքուկում չի հիշատակված: Նախատեսված է մանուկների համար:

ՊԳ

231. Մաքսիմով Ն. Աշխատանքի տունը /Թարգմ. Ա. Մ.— Բաթում: Տպ. Շ. Մ. Շմայակու, 1906.— 31 էջ.— (Ժողովրդական գրադ-ն).

Թարգմանչի մասին տեղեկութիւնները լրիվ չեն:

ՊԳ

232. Մաքսիմով Ն. Նախ մեռան, հետո ամուսնացան կամ կենդանի ենջեցյալներ: Կատակերգ. 2 գործող. /Թարգմ. Գ. Ավետյան.— Թիֆլիս: Տպ. Մ. Ռոտինյանցի, 1908.— 16 էջ.— Տիտղթ. վրա՝ «Հավելված «Յուշարար»-ի:

Շպկ-ի վերջին էջի վրա զետեղված է «Յուշարար»-ի Ա տարեշրջանում լույս ընծայված հավելվածների գրացուցակը:

ՊԳ

233. Մեծակով Մ. Սխալմունք մանկանոցում: Կոմեդիա 2 գործ. /Թարգմ. Հարութիւն Օրդուլյանց.— Թիֆլիս: Հրատ. «Աղբյուր-Տարազ» հանդեսների № 78, տպ. «Կուլտուրա» ընկ., 1910.— 9 էջ, 1 թ. նկ.

ՇՊԿ-ի վրա՝ «Աղբյուր-Տարազ»-ի, 1910 թ., 14-րդ պրեմիա:

ՊԳ

234. Մեծ տոն (Ռուսերենից).— Ս.— Պետերբուրգ: Հրատ. տիկ. Զաբելի, «Պուշկինյան տպարան», 1904.— 72 էջ.— (Մեր էժանագին գրադ-նը).

Հեղինակի և թարգմանչի մասին գրքուկում տեղեկութիւններ չկան: Սույն հրատարակութեան մասին հիշատակված է «Լումա» հանդեսում: Տես՝ «Լումա», 1905, № 1, մարտ, էջ 227.

ՊԳ

235. Մեր պապի գավազանը: /Փոքրահասակների համար/ /Թարգմ. Տիրուհի Կոստանյանց.— Թիֆլիս: Տպ. Մ. Շարաձեի, 1894.— 20 էջ.

Հեղինակի մասին գրքույկում չի նշված: Աշխարհաբար թարգմանություն, արևելահայերեն: Հավանական է, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից: Նախատեսված է մանուկների համար: Թարգմանության վերաբերյալ հղրակաջություններն արված են տեքստի վերլուծության հիման վրա:

ՊԳ

236. Մի կաթիլ արյուն: /Վեպ/ /Թարգմ. Սեյադ Ամիրյանց.— Բագու: Հրատ. Սմբատ-Բեկ-Լալայանի, տպ. Ս. Տեր-Հովհաննիսյանցի, 1885.—(3) 36 էջ.

Հեղինակի մասին չի հիշատակված: Տեքստի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թարգմանությունը կատարվել է ռուսերենից: Արտատպված է «Մեղու Հայաստանի» հանդեսից:

ՊԳ

237. Մի կողով ելակ: /Մի արարողություն/ /Թարգմ. Խորեն Ժ. Վրդ. Ստեփանն.— Ախալցխա: Տպ. Մկրտիչ Ղալամբարյանի, 1885.—32 էջ.— (Մանկական թատրոն).

Լույս է տեսել որպես հավելված՝ «Մանկավարժանոց» ամսագրի: Սույն հրատարակությունը կազմակից է Լ. Ն. Տոլստոյի «Կրեյցերյան սոնատ» գրքին.— Տես՝ ալիգ. 3.

ՊԳ

238. Միտոպոլսկի Կ. Զուրու: /Պատմվածք/ /Թարգմ. Թագուհի Քալանթարյան.— Թիֆլիս: Հրատ. Շնվեր մանուկներին» ընկ. № 25, տպ. Ն. Աղանյանի, 1915.—17(3) էջ.

Թարգմանչի մասին նշված է գրքույկի 17-րդ էջում:

Նախատեսված է պատանիների ընթերցանության համար: Շպկ-ի վերջին էջի վրա տպագրված է «Շնվեր մանուկներին» ընկ. հրատարակությունների գրացուցակը (25 անուն):

Տեքստի վերջում՝ «Շնվեր մանուկներին» ընկ. և «Հասկեր»-ի հրատարակությունների ցանկը՝ (78 անուն):

ՊԳ

239. Մյասնիցկի: Ես մեռա: Վոդեիլ 1 գործող. /Թարգմ. Ս. Թորոսյան.— 2-րդ տպագր.— Թիֆլիս: Տպ. «Էպոխա», 1915.—24 էջ.

ՊԳ

240. Մյասնիցկի: Ես մեռա: Վոդեիլ 1 գործող. /Թարգմ. Ս. Թորոսյան.— Թիֆլիս: Տպ. «Էպոխա», 1912.— 24 էջ.

Սույն հրատարակութիւնը գտնվում է Հայկական ՍՍՀ գիտութիւնների ակադեմիայի կենտրոնական գրադարանի հայկական ֆոնդերում:

ԱԿԳ

241. Մյասնիցկի: Էս էլ քեզ 200.000. Կոմեդիա 3 արար. /Ռուս. թարգմ. Գր. Ավետյան.— Թիֆլիս: Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Ն. Աղանյանի, 1911.—214—319 էջ.

Սույն հրատարակութիւնը տպակից է «Թատրոնական գրադարան» գրքին:— Տես՝ ալիգ. 5, էջ 214—319.

ՊԳ

242. Մորդովցե Դ. Լ. Ուղեորութիւն Արարատ կամ հիշատակարան տպավորութեանց ճանապարհին Արարատ /Թարգմ. Հ. Քերովքե Վ. Քուշներյան.— Վենետիկ: Ս. Դազար, 1895.—191 էջ.

Աշխատութիւնը թարգմանված է արեւմտահայերէն: Սույն գրքի առաջին հրատարակութիւնը լույս է տեսել 1883 թ. Շուշիում Աթաբեկ Բաբախանյանցի փոխադրութեամբ:

ՊԳ

243. Մորդովցե Դ. Լ. Արարատի գլուխը: Ժանապարհորդական տպավորութիւնների նկարագիր Դ. Լ. Մորդովցեի /Փոխադր. Առաքել Բաբախանյանցը.— Շուշի: Տպ. Միրզաջան Մահտեսի-Հակոբյանցի, 1883.—169(8) էջ.

Քովանդ: Առաջաբանի տեղ; Թիֆլիսից մինչև Կարայաչի անապատը; Մահվան հովիտով; Մինչև Ուզուն Թալա; Դիլիջանի կիրճը, աշխարհի ամենագեղանկար տեղերից մինը; Աքսորված մոլոկանների մոտ; Գոկչա լիճը; Դարայիչադ; Արարատի դիմաց; Կավեղեն կաթսան հնոցի մեջ; Արարատի ստորոտի մոտ; Սոսկալի գիշեր; Սարի վրա բարձրանալու երկրորդ օրը; Երրորդ օրը; Քրդերի վրանում; Արարատի գլխին-միայն ոչ թե ես; Դեպի տուն ետդարձը:

ՊԳ

244. Մորզովա Կ. Ի՛նչու ջախջախված են երջանկութեան թեւերը /Թարգմ. Հակովբ Գենչյան.— Թիֆլիս: Տպ. «Էսպերանտո», 1911.—12 էջ.— (Ռուս նորագույն գրողներ).

Կազմակից է Լեոնիդ Անդրեևի «Անզգուշութիւն» գրքուկին.— Տես՝ ալիգ. 5.

ՊԳ

245. Մուրախին Լ. Կայսերական մատանի: Պատմվածք քրիստոնեության առաջին դարից /Թարգմ. Նիկողայոս քհն. Բոսնական. — Բ տպագր. — Նոր-Նախիջևան: Տպ. Ս. Հ. Ավագյանի, 1913. — 22 էջ. ՊԳ.

246. Յա. Վ. Մենք միշտ գնում էինք: /Անցյալից/ /Թարգմ. Լ. Աբովյան. — Թիֆլիս: Տպ. Մովսես Վարդանյանի, 1904. — էջ 18—24.

Սույն հրատարակությունը տպակից է Հ. Սենկևիչի «Օրհնված հղիք» գրքին. — Տես՝ ալիգ. 3, էջ 18—24.

ՊԳ.

247. Յակոբի Յուր. Մերունի Մարկոն /Թարգմ. ռուս. Հովհ. Մեդնիկյան. — Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Ռոտինյանցի, 1896. — 62 էջ. — (Ժողովրդական գրադ-ն).

ՊԳ.

248. Յակոբսոն: Բեքեր բիձու հանաքը: Օպերետտա 1 գործող. /Թարգմ. Հ. Լալայանց. — Թիֆլիս: Հրատ. իշխ Մ. Բեհրովյանցի, տպ. էնֆիաճյանցի և ընկ., 1879. — 28 էջ.

Տեքստից հետո տպագրված է «Խմբագրութիւն Գ. Չմշկյանցի եւ Ս. Պալասանեանի»:

Կազմակից է «Անանուն կատակ» կատակերգությանը. — Տես՝ ալիգ. 2.

ՊԳ.

249. Յակովլև: Կանացի հետաքրքրություն կամ Աղամ ու Եփա: Կատակերգ. 2 գործող. /Թարգմ. Ա. Վրույր. — Թիֆլիս: Տպ. Ն. Աղանյանցի, 1907. — 28 էջ.

ՊԳ.

250. Յոթն ագապ: /Հեքիաթ/: Պատկերազարդ /Փոխադր. Լևոն-Մելիք Աղամյան. — Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայ. հրատ. ընկ. տպ. Մ. Մարտիրոսյանցի, 1899. — 22 էջ, 3 թ. իլ. — (Մանկական գրադ-ն).

Հեղինակի մասին գրքույկում չի հիշատակված: Ռուսերենից փոխադրված հանրամատչելի հրատարակություն է, նախատեսված է մանուկների ընթերցանության համար:

Սույն տպագրությունը գտնվում է Մատենադարանի հայկական ֆոնդերում:

Մ

251*. Յուդովա Օ. Անձնագրո՛հ մանուկ /Ռուս. թարգմ. Թիֆլիս,
1905.—46 էջ.

Տես՝ «Գրացուցակ հայերեն գրքերի Կովկ.
հայ. բարեգործ. ընկ. գր.-ն»։ Թիֆլիս,
1910, էջ 9.

252. Յուշկևիչ Ս. Ս. Տեսակցություն /Պիես 1 գործ/ /Թարգմ.
Ա. Գրիգորյան.— Թիֆլիս, Տպ. «Հերմես», 1904.—22 էջ.

ՊԳ

253. Յուշկևիչ Ս. Ս. Թագավորի Պիես 4 արար. /Թարգմ. Հովհ.
Հովհաննիսյան.— Թիֆլիս, Հրատ. Կովկ. հայոց հրատարակչ. ընկ.,
տպ. Ն. Աղանյանցի, 1912.— (I—VI), 115 էջ.— (Հանրային մա-
տենագարան № 4—5).

Գրքում գետեղված է Թարգմանչի խոսքը ուղղված Կովկասի
հայոց հրատարակչական ընկ.—թյան վարչությանը «Թագավոր» պի-
եսի թարգմանության առթիվ։

Շպկ-ի Ձ-րդ էջի վրա տպագրված է «Կովկ. հայոց հրատարակչ.
ընկ.—թյան հրատարակությունների գրացուցակը»։ Հեղ.՝ Յուշկևիչ
Սիմեոն Սոլովոյովիչ։

ՊԳ

254. Նադեժդա Վ. Աշտոնի ընտանիքը /Նադեժդա Վ. Ի. վեպը/
/Թարգմ. Ն. Ա.— Թիֆլիս, Տպ. Հ. էնֆիաճյանց և ընկ., 1868.—74
էջ.

ՊԳ

255. Նազարևա։ Փոթորիկ։ Կատակերգ. 1 արար. /Թարգմ.
Գր. Ավետյան.— Թիֆլիս, Հրատ. Գ. Գալստյանի, տպ. Ն. Աղան-
յանի, 1911, էջ 182—199.— (Թատրոնական գրադ-ն).

«Թատրոնական գրադարան» հանրամատչելի պիեսների շար-
քից կատարված ռուսերեն թարգմանություն է, արևելահայերեն։
Թարգմանությունը կատարել է հայ բեմի ականավոր վարպետ
Գրիգոր Ավետյանը։

Տպակից է «Թատրոնական գրադարան» գրքին, հտ. 2.— Տես՝
ալիգ. 4, էջ 182—199.,

ՊԳ

256. Նաժմիլին Իվ. Տիրամոր մազը /Թարգմ. Լ. Աբովյան.—
Թիֆլիս, Տպ. Մովսես Վարդանյանի, 1904.—10—17 էջ.

Սույն հրատարակությունը տպակից է Հ. Սենկևիչի «Օրհնված
եղիր» գրքին.— Տես՝ ալիգ. 2, էջ 10—17.

ՊԳ

257. Նաժիվին Իվ. Լեզենդա /Թարգմ. Վահան Ազատյան.— Թիֆլիս: Տպ. Թավադքիլաձեի, 1903.—31(1) էջ.

ՊԳ

258. Նեզվանով Պ. Մուկուչի հավիկը: Մանկական վեպիկ /Փոխադր. Գ. Ա.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայ. հրատարակչ. ընկ., տպ. վրաց հրատ. ընկ., 1894.—54 էջ.— (Մանկական գրադ-ն).

Թարգմանչի մասին տեղեկությունները լրիվ չեն: Լույս է տեսել «Մանկական գրադարան» մատենաշարով:

ՊԳ

259. Նեմիրովիչ-Պանչենկո Վ. Ի. Գրաշարուհի: Զրույց.— Ս.— Պետերբուրգ: Տպ. «Տրուդ», 1903.—20 էջ.

Թարգմանված է ռուսերենից, արևելահայերեն: Թարգմանչի մասին գրքույկում չի նշված:

ՊԳ

260. Նեմիրովիչ-Պանչենկո Վ. Ի. Կեղեքիչ: /Վեպիկ/ Վաս. Ի. Նեմիրովիչ-Պանչենկոյի.— Թիֆլիս: Հրատ. Թիֆլ. հայոց հրատարակչ. ընկ., տպ. Մ. Շարաձեի և ընկ., 1895.—54(2) էջ.— (Ժողովրդական գրադ-ն).

Թարգմանչի մասին գրքույկում չի հիշատակված: Լույս է տեսել «Ժողովրդական գրադարան» մատենաշարով:

Շպկի-3-րդ և 4-րդ էջերի վրա զետեղված է լույս տեսած գրականության ցուցակ:

ՊԳ

261. Նեմիրովիչ-Պանչենկո Վ. Ի. Կենդանացած երգը /Պատմվածք/ թարգմ. Վաղարշակ Թումանյան.— Բագու: Տպ. Հ. Գ. Գյուլբասարյանի, 1905.—45(1) էջ.

Բովանդ.: Գետնախորշում: Զահե: Կենդանի թաղվածը: Վերարկուն: Ճեղքվածքը և ընկերը: Նկվոր հյուրը: Բացվեց: Նրկուսը միասին:

Սույն գրքույկը հրատարակվել է Բաքվի հայ մարդասիրական ընկ-թյան կողմից:

Տեքստի վերջում զետեղված է լույս տեսած գրականության ցուցակ:

ՊԳ

262. Նեմիրովիչ-Պանչենկո Վ. Ի. Հայուհի Գայանեն /Թարգմ.

Արսեն սարկ. Միմոնյանց.— Մոսկվա: Տպ. Ք. Բարխուդարյանի, 1907.— 20 էջ.

Սույն հրատարակությունը կազմակից է Հ. Սուլովյանի «Ո՞վ է նա» գրքին: Տես ավիզ. 5.

Նկարագրված է հայ ժողովրդի ցեղասպանությունը թուրք բարբարոսների կողմից և հայուհի Գաթանեի հերոսական կերպարը:

ՊԳ

263^{**}. Նեմիրովիչ-Դանշենկո Վ. Ի. Հայ հերոսուհին.— Ա. տ. և թ.), 32 էջ.

Գրքույկն առանց տիտղոսաթերթի և շալկ-ի է: Նկարագրությունը կատարված է տեքստի հիման վրա: Թարգմանչի մասին տեղեկություններ չկան:

Մատենագիտական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Նեմիրովիչ-Դանշենկոյի սույն պատմվածքը լույս է տեսել Ս. Պետերբուրգում, 1907 թ.

Տես՝ «Կովկասի հայ բարեգործական ընկ. գրադարանի գրացուցակը»: Ա հավելված «Գեղարվեստական գրականություն հայերեն գրքերի», Թիֆլիս, 1910, էջ 109.

ՊԳ

264. Նեմիրովիչ-Դանշենկո Վ. Ի. Նրանք հինգն էին: Պատմվածք/ Թարգմ. Մենիկ Թումանյան.— Մոսկվա: Հրատ. Մոսկվայի մի խումբ ուսանողների, տպ. Ք. Բարխուդարյանի, 1910.— 31 էջ, 1 դիմանկ.— (Հանրային գրադ-ն. 2):

